ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Թերեզա Վարդանյան, Մակրոտնտեսական քաղաքականության վարչության մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ղազախստանի Հանրապետություն, ք. Ալմաթի, 2024 թվականի դեկտեմբերի 2-ից դեկտեմբերի 13-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Մակրոտնտեսական վերլուծություն և կառավարում» դասընթացին, որի ընթացքում ներկայացվել են տնտեսության հատվածները, դրանց միջև փոխառնչությունները: Դասընթացը ուղղված էր նաև տարբեր մակրոտնտեսական քաղաքականությունների արդյունավետության գնահատմանը, դրանց գործիքների ուսումնասիրմանը և դրանց միջոցով մակրոտնտնտեսական կայունության ձեռքբերման ուղիների վերլուծությանը: Դասընթացը ուղեկցվել է կոնկրետ երկրի օրինակով վերլուծությունների և կանխատեսումների իրականացմամբ:

Ընդհանուր առմամբ, դասընթացը համապարփակ կերպով ամփոփել է մակրոտնտեսական կայունության գնահատման մեթոդական մոտեցումները և գործիքակազմը, որոնք հնարավորություն են տալիս առավել լավ պատկերացնել տնտեսական համակարգը, տնտեսության հատվածներն ու դրանց միջև փոխառնչությունները:

5. Քննարկված թեմաները՝

1. Մակրոտնտեսական կայունություն,
2. Քանակական վերլուծություն և կանխատեսման մեթոդներ,
3. Իրական հատված և կանխատեսումներ.
   - ՀՆԱ և Ինֆլյացիա,
   - Դեֆլյատոր և Փոխարժեք,
4. Վճարային հաշվեկշռի ընդհանուր բնութագիր և ծանոթություն.
   - Արտահանում, ներմուծում, կապիտալի հաշիվ,
   - Արտաքին պահուստները և ԱՄՀ-ի դերը,
   - Խնայողությունների և ներդրումների մնացորդը,
5. Ֆիսկալ հատվածը և կանխատեսումները.
   - Հարկաբյուջետային հատվածի շրջանակը,
   - Ֆիսկալ հաշվառում,
   - Ֆինանսավորում և պարտք,

- Կանխատեսման մեթոդներ,

6. Ֆիսկալ քաղաքականություն.
    - Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը տնտեսության վրա,
    - Մակրոտնտեսական ցնցումների ազդեցությունը հարկաբյուջետային դեֆիցիտի վրա,
    - Ինչպես վարել հարկաբյուջետային քաղաքականություն,
    - Ֆիսկալ բազմապատկիչների գնահատում,
7. Դրամավարկային քաղաքականություն և կանխատեսումներ.
    - Դրամական հաշիվներ,
    - Փոխառնչություններ այլ ոլորտների հետ,
    - Կանխատեսման և գնահատման մեթոդներ,
8. Մակրոտնտեսական և հարկաբյուջետային կայունություն.
    - Տնտեսության միջնաժամկետ դինամիկան,
    - Պետական և արտաքին պարտքի կայունությունը,
    - Պարզ միջնաժամկետ շրջանակի նախագծում,
9. Մակրոֆինանսական կայունություն.
    - Մակրոֆինանսական կապերի վերլուծություն և գնահատում,
    - Ֆինանսական խոցելի կողմերի բացահայտում,
    - Մակրոպրուդենցիալ քաղաքականության ուսումասիրություն,
    - Սթրես-թեստավորում,
10. Մակրոտնտեսական ճշգրտումների ծրագրում.
    - Ծրագրի ձևավորում. կայունացման քաղաքականություն և կառուցվածքային բարեփոխումներ,
    - Արտաքին ֆինանսավորման դերը,
    - Հարկաբյուջետային քաղաքականություն և մակրոտնտեսական կայունություն,
    - Կառուցվածքային բարեփոխումների առաջնահերթությունների սահմանում,

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացով նախատեսված դասախոսություններն ուղեկցվել են գործնական սեմինարներով՝ մշակված գործիքակազմով ներկայացված տեսական գիտելիքները գործնականում կիրառելու նպատակով: Յուրաքանչյուր գործնական աշխատանք ամփոփվում էր ստացված արդյունքների քննարկմամբ: Մասնավորապես, որպես դասընթացի ամփոփում, ներկայացվել է շնորհանդես՝ Ղազախստանի Հանրապետության տնտեսության ախտորոշում: Կիրառելով ներկայացված գործիքակազմը՝ բացահայտվել է տնտեսության արտաքին, ֆինանսական և հարկաբյուջետային հատվածներում առկա իրավիճակը, կուտակված ռիսկերը և ներկայացվել են քաղաքանությունների մշակման առաջարկներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

16 դեկտեմբեր, 2024թ.